ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Աղավնատուն համայնք, ՀՀ, Արմավիրի
մարզ, գ.Աղավնատուն, Ն.Մաթևոսյան պող. 25, Հեռ.
(0231)60075 , aghavnatun.armavir@mta.gov.am

N Ա-42
05 մարտ 2018թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՇՈՏ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ձեզ է ներկայացվում Աղավնատուն համայնքի ղեկավարի 2018թվականի փետրվար ամսին ընդունած որոշումները: Փետրվար ամսին կարգադրություններ չեն արձակվել: Առդիր 5 թերթ:

Հարգանքով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գնել Մաթևոսյան**

Կատ. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Վ. Զոհրաբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Աղավնատուն, (0231)60075, aghavnatun.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 2-Ա

ԱՐՄԱՆ ՍՊԱՐՏԱԿԻ ԱՎԱԳՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՄԻ ՀԱՏՎԱԾԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնքի ավագանու 19.02.2016թվականի 11Ա որոշմամբ հաստատված «Աղավնատուն համայնքի (բնակավայրի) պարզեցված հատակագիծը»և հիմք ընդունելով Արման Սպարտակի Ավագյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Արման Սպարտակի Ավագյանին սեփականության իրավունքով պատկանող 04-006-0202-0017 կադաստրային ծածկագրով 0,44հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասից՝վարելահողից, միհատվածը՝ 0,0145 համակերեսով, համաձայն ԱՁ «ԿարենՄաչանյան»-ի կողմից տրված իրավիճակային հատակագծի, փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա, որպես բնակելի կառուցապատման համար՝ բնակելի տուն կառուցելու համար:
2.Փոխված հողի կադաստրային արժեքների տարբերությունը 1^2 մետրի համար 409.5 ՀՀ դրամ է, 145,0քմ համար կազմում է (59377.5) հիսունինը հազար երեքհարյուր յոթանասունյոթ ամբողջ հինգ ՀՀդրամ, որը 60-օրյա ժամկետում պետք է վճարել Աղավնատուն համայքնիբյուջե՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառականվարչության հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը ճանաչել ուժը կորցրած:
3.Սույն որոշմամբ սահմանված փոփոխությունները պետական գրանցման համար ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում:
4.Հողամասին տալ հասցե. ՀՀ Արմավիրիմարզ ,գ. Աղավնատուն Աղավնատուն-Լեռնամերձ խճուղի 3:
5.Հետագա կառուցապատումն իրականացնել Հայաստանի Հանրապետության

քաղաքաշինության բնագավառի օրենսդրության պահանջներին համապատասխան, նախապես համաձայնեցված և հաստատված նախագծային փաստաթղթերի հիման վրա Աղավնատուն համայնքի ղեկավարի կողմից տրված շինարարության թույլտվության համաձայն:

6.Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել վարչական կարգով Աղավնատուն համայնքի ղեկավարի/կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԳՆԵԼ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2018 թ.փետրվարի 01
գ.Աղավնատուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Աղավնատուն, (0231)60075, aghavnatun.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 3-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Աղավնատուն համայնքի բնակիչ՝ Արման Սպարտակի Ավագյանը դիմել է Աղավնատան համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք սեփականության վկայական 879632 տրված 01.08.2003թ/ Աղավնատուն-Լեռնամերձ խճուղի 3 հասցեում գտնվող բնակելի տան (ներքին մակերես 102,4քմ, արտաքին՝139,3քմ), օրինականացնելու խնդրանքով:
Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդհոդվածի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականիապրիլի 17-ի N470-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունքև չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Օրինական ճանաչել Արման Սպարտակի Ավագյանին պատկանող գ. Աղավնատուն Աղավնատուն -Լեռնամերձ խճուղի 3 հասցեում գտնվող բնակելի տան արտաքին՝139,3քմ (ներքին՝ 102.4քմ) ճանաչել օրինական:
2.Հողամասում առկա ծածկոցը ճանաչել օրինական:
3.Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը կազմում է 1.0քմ. համար բնակելի տուն 860.0 դրամ /860դ*139,3քմ =119.798դ. մեկ հարյուր տասնիննը հազար յոթ հարյուր իննսունութ /ՀՀ դրամ վճարը, որոշման ընդունման օրվանից 60 օրվա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած :
4.Սույնորոշումից ծագող իրավունքներն ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզային միավորման ստորաբաժանման կողմից :
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԳՆԵԼ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2018թ փետրվարի 01
գ.Աղավնատուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Աղավնատուն, (0231)60075, aghavnatun.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 4-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 164-րդ հոդվածով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի առաջին մասով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատան համայնքապետարանի աշխատակազմի 2018 թվականի հերթական արձակուրդի ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԳՆԵԼ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2018 թ. փետրվարի 2
գ.Աղավնատուն

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի
Աղավնատուն համայնքի ղեկավարի
2018 թվականի փետրվարի 2-ի
N-4 -Ա որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ԱՂԱՎՆԱՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ

Հ/Հ	Ազգանուն, անուն	Պաշտոնը	Ամիսը
1.	Մաթևոսյան Գնել	Համայնքի ղեկավար	հուլիս
2	Զոհրաբյան Վալերի	Աշխատակազմի քարտուղար	հոկտեմբեր
3	Թորոսյան Զարուհի	Գլխավոր մասնագետ	նոյեմբեր
4	Մարտիրոսյան Արմեն	Գլխավոր մասնագետ	հունիս
5	Նիկողոսյան Վարդան	առաջատար մասնագետ	հոկտեմբեր
6	Հարությունյան Մարիետա	առաջին կարգի մասնագետ	օգոստոս
7	Գևորգյան Մարգարիտ	առաջին կարգի մասնագետ	սեպտեմբեր
8	Գևորգյան Թագուհի	գործավար-քարտուղարուհի	օգոստոս
9	Ավետիսյան Հարություն	անասնաբույժ	հունիս
10	Նիկողոսյան Արմեն	այգեպան	փետրվար
11	Նիկողոսյան Սամվել	վարորդ	ապրիլ
12	Գասպարյան Ալվարթ	հավաքարար	սեպտեմբեր

Աշխատակազմի քարտուղար՝ Վ.Զոհրաբյան